

ՔՐԵՐԶԱՆԷԿ ՀՈՔԵՐՈՐ ՏԷՔԵ

Տ. Տ. ԳՐԻԳՈՐ ՊԵՏՐՈՍ ԺԵ. ԱՂԱՋԱՆԵԱՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍ-ՊԱՏՐԻԱՐԲ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

ԿԱՐԴԻՆԱԼ

Նորին Հոգեւոր Տէրութիւնը, Գրիգոր Պետրոս ԺԵ. Կաթողիկոս պատրիարք Կաթողիկէ Հայոց, Յաւիտենական Քաղաքը կը գտնուէր 1945 յուլիսէն ի վեր: Իր աթոռանիստ Բէյրութէն մեկնած էր Հոռոմ տալու իր այցելութիւնը առ սեամս Առաքելոց Նորին Սրբութեան Պիոս ԺԲ. Քահանայապետին: Դեկտեմբեր 23 էր, երբ Նորին Սրբութեան Քարտուղարութիւնը կը ծանուցանէր իրեն, թէ Սրբազան Պապը իր Գաղտնի Համաժողովին մէջ, որ պիտի գումարուի Փետրուար 18ին, պիտի բարձրացնէ զինքը կարդինալական պատուի: Հաճած էր Սրբազան Պապը անուանել 32 նոր կարդինալ աշխարհի հինգ մասերէ, անխտիր մեծ եւ փոքր ազգերէ: Այս բարեհամբաւ աւետիքը անհուն ցնծութեամբ ծափահարած էր բովանդակ կաթողիկէ աշխարհը: Ոչ նուազ հրճուած էր եւ կաթողիկէ հայ ժողովուրդը, վասն զի մեծամեծ ազգերու թուին մէջ նաեւ հայ ժողովուրդին կ'ընծայուէր այս շնորհը յանձին Նորին Հոգեւոր Տիրոջ:

Գաղտնի Համաժողովը կայացաւ 1946, փետրուար 18ին: Յիշեալ 32 ընտրեալներէն առաջինն եղաւ Նորին Հոգեւոր Տէրութիւնն, Գրիգոր Պետրոս ԺԵ կաթողիկոս-պատրիարք, որ վիճակուեցաւ «Կարդինալ Քահանայ» պատուին: Յաջորդաբար տեղի ունեցաւ կարդինալական կարմիր խաչ գտակի տուչութիւնը: Հայ Կարդինալին համար սահմանուած էր խաչանիշ խոյր ծիրանագոյն շղարշով: Նորաստեղծ կարդինալներու կողմէ շնորհակալութեան խօսքը առ Նորին Սրբութիւնն արտասանեց կարդինալ Հոգեւոր Տէրը: Այս նորանշան հանդէսին ներկայ էին բազմաթիւ պատուադիր եկեղեցականներ եւ աշխարհականներ ամէն ազգէ եւ աշխարհէ: Անոնց թուին մէջ էր նաեւ Մխիթարեան Միաբանութեանս Ընդհանրական Աբբահայրն Արհիպատիւ Մեսրոպ արքեպիսկոպոս Հասարգեան աորնթերակայութեամբ Մեծ. Հ. Վահան Վ. Խնդիզբանի:

Մարտ 12ին Պիոս ԺԲ. Քահանայապետին զահակալութեան տարեդարձն էր: Նորին Սրբութիւնը փափագ յայտնած էր, որ այս առիթով Ս. Պատարագը մատուցուէր նորընտիր հայ Կարդինալէն: Ս. Պատարագը տեղի ունեցաւ Սիքստեան Մատուռին մէջ. ներկայ էին Նորին Սրբութիւնն Պիոս ԺԲ., Դիւանագիտական Մարմինը, բազմաթիւ եկեղեցականներ, հաւատացեալներ եւ զանազան երկիրներէ հոն հաւաքուած Հայեր: Հայերէն Պատարագը մատուցուեցաւ ծէսին բովանդակ շքեղութեամբ եւ հայկական երգեցողութեան փայլուն հանդիսադրութեամբ: Ս. Աւետարաններու ընթերցումէն յետոյ ծիսական «Խաղաղութիւնն ամենեցուն» տուաւ Նորին Սրբութիւնը հայերէն հնչիւնով:

Այս արարողութիւններէն ետքը Նորին Սրբութիւնը ընդունեցաւ հայ Գաղութը յունկնդրութիւն: Այս առիթով ուղղեց հայ ներկաներուն հայրական սրտապինդ խօսքեր: Ի մէջ այլոց կ'արտայայտուէր.

«Սիրելի Որդեակներ... Մեր ընտրած Կարդինալներու առաջինն է Ձեր ժողովուրդի զաւակներէն մէկը. Կիլիկիոյ Հայոց բարձրամեծար Պատրիարքը Կարդինալ ընելով Մենք դիտում ունեցանք անշուշտ վարձատրել շատ արժանաւոր եւ ամենահաւատարիմ՝ աւագ Եկեղեցականի մը գերազանց արժանիքները. բայց կոչելով զանիկա անդամակցելու Հոռոմէական ծերակոյտին եւ մատուցանելու Հայրապետական Պատարագ Սիքստեան Մատուռի մէջ իր մեծաքանչ ծէսին բովանդակ շքեղութեամբը, ուզեցինք մի եւ նոյն ժամանակ շեշտել ու, այսպէս ըսենք, պսակել հանդիսաւոր ցոյցով մը շարքը փաստերու այն հոգածութեան եւ սիրոյ, զոր-քրիստոնէութեան ամենահին օրերէն, դարերու ընթացքին եւ մինչեւ այսօր չէ դադրած երբեք Պետրոսի Գահը տածել Հայաստանի եւ իր ժողովուրդին հանդէպ»:

Այս թանկագին վկայութեամբ զեղեցիկ բացատրած է Պիոս ԺԲ. այն դրուապատճառները, որոնք մղած են զինքը իր ընտրութեան մէջ առաջին տեղը շնորհելու Աղաջանեան Հոգեւոր Տիրոջ. այսինքն հաճած է «վարձատրել շատ արժանաւոր եւ ամենահաւատարիմ՝ աւագ Եկեղեցականի մը գերազանց արժանիքները»: Յաճախ թնդացած են մեր սրտերը, երբ հայ ժողովուրդի քաջակորով զաւակներէն մին կամ միւր հոյակապ, ականաւոր եւ անուանի հանդիսացած են ոսպմական կամ քաղաքական, գիտական կամ արուեստական որ եւ է ասպարէզի վրայ եւ գնահատուած բարձրագոյնս: Ո՛րչափ առաւել առիթ կ'ընծայուի մեզ այժմ՝ բովանդակ սրտով հրճուելու, երբ տոմիկ մը, մեզի համարին եւ արնակից, կը վարձատրուի Կաթողիկէ Եկեղեցոյ Հովուապետին կողմէ իր «գերազանց արժանիքներուն համար», եւ կը պատուի կարդինալական եւ իշխանական բարձրագոյն պատուով: Աղաջանեան այդ «գերազանց արժանիքները», փայլեցուցած էր եկեղեցական ասպարէզի վրայ. ուր ոչ միայն եկեղեցական գիտութիւններու մէջ իր երեւան բերած կարողութիւններուն համար երբեակ պսակով պսակուած էր, եւ Համալսարանական կաթողը բարձրացած, այլ եւ իր յանկուցիչ վարքով, սրբակեաց գնացքով եւ հաւատարիմ պաշտօնավարութեամբ հիացմունք խլած համաշխարհէն: Իր նկարագրի ամբողջութիւնը, հոգւոյ բարձրութիւնը, սրտի ազնուութիւնը հմայած են ոչ միայն իր սննդակիցներն ու ուսումնակիցները, այլ եւ աշակերտներն ու շրջակայքը Յաւիտենական Քաղաքի: Հազարաւորներ ու քիւրաւորներ, որոնք ի մերձուստ ականատեսներն եղած են իր ազնուական ընթացքին, խնդակցեցան միախուռն այս արդար վարձքին եւ արժանաւոր գնահատանքին համար, զոր բերաւ Նորին Սրբութիւնը այս Աւագ Եկեղեցականին: Ծրագր, որ Եկեղեցոյ աշտարակէն կը փայլատակէ իր լոյսը, կը զուարճացնէ ամէն լուսատենչ տեսանելիքներ:

Մեր խոնարհ հպատակութիւնը իր Բարձրութեան առջեւ, Որդիական սէրը հանդէպ իր Հայրապետութեան եւ անխտն հիացմունքը Նորին Տիրանափայլ Պայծառութեան վրայ:

ԽՄՏԱԳՐՈՒԹՅՈՒՆ «Հարոյս Աստօրեան», Ի:

1067-62

